



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Նախարան

2021 թվականի 3-րդ եռամսյակում ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեությունն ուղղված է եղել ԱՃԹՆ-ի երրորդ ազգային զեկույցի նախագծի, դրա վերաբերյալ շահագրգիռ կողմերի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված նկատառումների քննարկմանը և ԲՇԽ-ի կողմից զեկույցի ընդունմանը, զեկույցի ներկայացման միջոցառման կազմակերպման աշխատանքերին:

Հուլիսին հրապարակվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. զեկույցը¹, որը հանրությանը ներկայացվել է հուլիսի 23-ին կայացած Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ներկայացման համաժողովին: Համաժողովին մասնակցել են ՀՀ կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, միջազգային գործընկեր կազմակերպությունների մոտ 100 ներկայացուցիչներ: Համաժողովը հեռարձակվել է նաև Zoom հարթակի միջոցով՝ բոլոր ցանկացողների համար ապահովելով համաժողովին հեռահար հետևելու և մասնակցելու հնարավորություն:

Համաժողովին ներկայացվել է նաև իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը, դրա աշխատանքի սկզբունքները, ինչպես նաև նման համակարգի դերն ու նշանակությունը հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և վերահսկողության տեսանկյունից: Էլեկտրոնային համակարգի ներկայացումից հետո շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կայացել է պանելային քննարկում իրական սեփականատերերի բացահայտման հայաստանյան համակարգի ուժեղ կողմերի և առկա մարտահրավերների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածի գործունեությունը ընդգրկել է նաև Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերության կողմից իրականացված՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նպատակահարմարությունը հետազոտող

¹ <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

Նախնական ուսումնասիրության նախագծի վերաբերյալ շահագրգիռ կողմերի ներկայացրած նկատառումների քննարկման, ԲՇԽ-ի կողմից այդ ուսումնասիրության և համապատասխան որոշումների ընդունման, ինչպես նաև ուսումնասիրության ներկայացման աշխատաժողովի կազմակերպման հետ կապված աշխատանքները:

Եվ համաժողովը, և դրան հետևած եռօրյա արտագնա աշխատաժողովի կազմակերպումը, որին մասնակցեցին ԲՇԽ-ի անդամներ, լիազոր մարմինների և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, վկայեցին այն մասին, որ որոշակի հակահամաճարակային նախագգուշական միջոցառումներ պահպանելով, շատ կարևոր է հանրային առկա միջոցառումների անցկացումը:

2021թ. երրորդ եռամսյակում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնող հանքարդյունահանող ընկերությունների համար ԱՃԹՆ քարտուղարությունը պատրաստել է Իրական շահառուների բացահայտման կարգավորումների օրենսդրական փոփոխությունների ուղեցույց², որը տեղադրվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում:

Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Պետական եկամուտների կոմիտեն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (համայնքները), Շրջակա միջավայրի նախարարությունը և հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն ունեցող ընդերքօգտագործողները հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակում ներկայացրել են 2020թ. ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները:

2021թ. աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքային միջոցառումների կատարման ընթացքի մասին ավելի մանրամասն ներկայացվում է ստորև: Աշխատանքների կատարումը նկարագրված է ըստ Աշխատանքային ծրագրում սահմանված նպատակների ներքո կատարված միջոցառումների բաշխման և երրորդ եռամսյակի համար սահմանված կատարման ժամկետների:

² <https://www.eiti.am/hy/Իրական-սեփականատերերի-բացահայտում>

1. Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում

Միջոցառումներ 1-8

Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի թարմացումը և էջերի նոր բովանդակությամբ համալրումը կրել է շարունակական բնույթ: Հրապարակվել և հանրությանը հասանելի են դարձել հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Օտարալեզու օգտվողների համար կայքի կարևոր տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն: ԱՃԹՆ-ի կայքում տեղադրվել և հասանելի են դարձել Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցը³, զեկույցի սեղմագիրը⁴, 2019 թվականի հաստատված հրապարակային հաշվետվությունները⁵, ինչպես նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցի ներկայացման համաժողովի տեսաձայնագրությունը⁶:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է առցանց հաշվետվության համակարգում լիազոր մարմինների և հանքարդյունահանող ընկերությունների կողմից 2020թ. համար ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների մուտքագրումը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը 2021թ. երրորդ եռամսյակում նույնպես շարունակել է ծառայել որպես տեղեկատվության տարածման հիմնական հարթակ: Կայքում հայերեն և անգլերեն լեզուներով հրապարակվել է ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 6 նորություն՝ ԱՃԹՆ-ի տեղական և միջազգային գործընթացների, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ⁷: Կայքում հրապարակված զեկույցից բացի, առցանց հաշվետվության հարթակում հանրությանը հասանելի են դարձել մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների⁸ և լիազոր մարմինների⁹ 2019 թվականի հարապարակային հաշվետվությունները: Այդ հաշվետվություններում ներառված

³ <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

⁴ <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

⁵ <https://reports.eiti.am/hy/>

⁶ <https://www.eiti.am/hy/eiti-armenia-2021-annual-conference-%D5%A1%D5%BC%D5%B4>

⁷ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

⁸ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/>

⁹ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/>

տվյալները՝ հարթակի զտման¹⁰ և գծապատկերների¹¹ ինքնաշխատ գեներացման գործիքներով տեսանելի և դիդակտիկ ձևով ներկայացնում են ոլորտի ֆինանսական և տնտեսական ապագրեզացված տվյալները և հնարավորություն են տալիս համադրել դրանք նախորդ տարիների տվյալների հետ:

Տպագրվել են ԱՃԹՆ-ի իրականացման 3 տարիների հիմնական արդյունքների մասին տեղեկատվական թերթիկներ, որոնք տարածվել են ԱՃԹՆ-ի տարեկան համաժողովի ժամանակ:

Զուգահեռաբար թարմացվել են նաև Facebook¹², YouTube¹³ և Twitter¹⁴ ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը: ԱՃԹՆ-ի քարտուղարությունը մի շարք մեդիա ծրագրերում ներկայացրել է իրական սեփականատերերի բացահայտման գործընթացը, արդյունքները և աշխատանքների ընթացքը:

Շարունակական է եղել նաև հայաստանյան քարտուղարության կողմից ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ տրամադրվող խորհրդատվությունը, մասնավորապես, առանձին գրավոր ուղեցույց է պատրաստվել համայնքների ղեկավարների կողմից ՏԿԵՆ տրամադրվող հրապարակային հաշվետվության մեջ պայմանագրային սոցիալ-տնտեսական պարտավորությունների մասին տեղեկատվության ներկայացման վերաբերյալ:

Հուլիսի 24-26-ը Ծաղկաձորում անցկացվել է ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության կողմից կազմակերպված մեծ աշխատաժողով, որին մասնակցել են ԲՇԽ-ի, լիազոր մարմինների, գործընկեր կազմակերպությունների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի, 30 ներկայացուցիչ: Աշխատաժողովի թեմաները մի քանիսն էին՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի ընդլայնման շրջանակի վերաբերյալ Գրանթ Թորնթոն ընկերության կողմից պատրաստված նախնական ուսումնասիրության ներկայացումը, դրանում բերված տեղեկատվության և եզրահանգումների քննարկումը, ԱՃԹՆ-ի իրավական և ընթացակարգային բացերի վերացման ճանապարհային քարտեզի քննարկումը, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2021-2022թթ.աշխատանքային ծրագրի ներկայացումը, ԱՃԹՆ-ի զարգացման ներկա միտումները և այլն:

¹⁰ <https://reports.eiti.am/hy/>

¹¹ <https://reports.eiti.am/hy/graphics/>

¹² <https://www.facebook.com/EITIArmenia/>

¹³ https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A

¹⁴ https://twitter.com/EITI_Armenia

ԱՃԹՆ-ի տարեկան համաժողով

2021թ. հուլիսի 23-ին, Երևանի Արմենիա Մարիոթ հյուրանոցում տեղի ունեցավ Հայաստանի ԱՃԹՆ 2019թ. ազգային զեկույցի և իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ներկայացման համաժողովը¹⁵: Համաժողովին մասնակցել են ՀՀ կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ԶԼՄ-ների, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, միջազգային գործընկեր կազմակերպությունների մոտ 100 ներկայացուցիչներ:

Համաժողովը հեռարձակվել է նաև Zoom հարթակի միջոցով՝ բոլոր ցանկացողների համար ապահովելով համաժողովին հեռահար հետևելու և մասնակցելու հնարավորությունը:

Համաժողովի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանը, որն ասաց, թե Արդարադատության նախարարության համար իրական շահառուների բացահայտման ինստիտուտի ներդրումը հակակառույցիոն ռազմավարության կարևոր միջոցառումներից մեկն է, որի համար ծավալուն օրենսդրական փոփոխություններ են իրականացվել: Սուրեն Գրիգորյանը նշեց, որ իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ներդրման համար հիմք են հանդիսացել ԱՃԹՆ-ի շրջանակներում ընդերքօգտագործող ընկերությունների իրական սեփականատերերին բացահայտելու մեկնարկային ծրագիրը և դրա գործարկման ընթացքում ձեռք բերված փորձառությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը, որը նշեց, թե ԱՃԹՆ-ի ներդրման շնորհիվ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը դարձել է բարեփոխումների առաջամարտիկ և խոսեց ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի կողմից ԱՃԹՆ-ի ներդրման գործում Հայաստանին շնորհված բարձրագույն

¹⁵

<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/07/23/2021/111/>

<https://www.eiti.am/hy/eiti-armenia-2021-annual-conference-%D5%A1%D5%BC%D5%B4>

գնահատականների մասին, ինչը, Լիլիա Շուշանյանի կարծիքով՝ 3 տարի առաջ նախանշված նպատակների իրագործման մասին է վկայում:

Մասնակիցներին ողջունեց նաև ԱՃԹՆ քարտուղարության ավագ խորհրդատու Մարկ Բըրնեթը, որն ընդգծեց, թե Հայաստանը միշտ դիտարկվում է որպես ԱՃԹՆ-ի ներդրման լավագույն փորձ ունեցող երկիր, և այդ արդյունքը ձեռք է բերվել հայաստանյան կողմի լուրջ աշխատանքի և շարունակական ջանքերի շնորհիվ, իսկ գոյություն ունեցող ԱՃԹՆ հաշվետվությունների առցանց հարթակը, ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակումը և իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը լավագույն հնարավորություններն են ընձեռնում Հայաստանին՝ դառնալու համակարգված բացահայտումների գործելաոճ որդեգրած երկիր:

Ելույթ ունեցավ նաև Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Վիգեն Սարգսյանը, որը հատկապես ընդգծեց ԱՃԹՆ-ի ներդրման շնորհիվ «կեղծ տեղեկությունները» բացառելու հնարավորությունների, ինչպես նաև գործընթացին շարունակաբար աջակցելու ՀԲ-ի պատրաստակամության մասին:

ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը և Արդարադատության նախարարության Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Անի Վարդերեսյանը ներկայացրեցին իրական սեփականատերերի բացահայտման՝ 2017 թվականից մեկնարկած գործընթացը, մինչ այժմ արձանագրած արդյունքները, ինչպես նաև 2021 թվականի հունիսին Ազգային ժողովի կողմից ընդունված նոր իրավական կարգավորումները, որոնցով ընդլայնվում և բարեփոխվում է իրական շահառուների (սեփականատերերի) հայտարարագրման գործընթացը:

Համաժողովի առաջին մասում VXSofit ընկերությունը ներկայացրեց իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը¹⁶ և դրա դերն ու նշանակությունը հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և վերահսկողության համար: Էլեկտրոնային համակարգը ստեղծվել է Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ:

Համակարգի ներկայացումից հետո կազմակերպվել է պանելային քննարկում, որի թեման էր՝ «Իրական սեփականատերերի բացահայտումը որպես

¹⁶ <https://bo.e-register.am/am/auth>

հակակոռուպցիոն գործիք. հնարավորություններն ու մարտահրավերները»: Պանելային քննարկմանը մասնակցեցին Արդարադատության նախարարության Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Անի Վարդերեսյանը, OpenOwnership իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստրի ներկայացուցիչ Փիթեր Լոուն (առցանց), Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը, Սիվիլնեթի հետաքննող լրագրող Մկրտիչ Կարապետյանը: Բանախոսները ներկայացրեցին իրենց կարծիքը ստեղծված համակարգի, իրական սեփականատերերի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ հավաքելու համար դրա ընձեռած հնարավորությունների, իրական սեփականատերերի տվյալների ստանդարտի (BODS) կիրառման, համակարգի զարգացման հնարավորությունների, նոր իրավական կարգավորումների, 2021 թվականի սեպտեմբերի 1-ից նոր ոլորտներում գործող՝ իրական շահառուների բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձանց պատշաճ խորհրդատվության տրամադրման, առկա մարտահրավերների և դրանց լուծման ընթացիկ աշխատանքների մասին: Քննարկումից հետո պանելի բանախոսները պատասխանեցին համաժողովի մասնակիցների հարցադրումներին:

Համաժողովի երկրորդ մասում Անկախ ադմինիստրատոր Գրանթ Թորնթոն ընկերությունը ներկայացրեց Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. 3-րդ ազգային զեկույցը, որի ժամանակ Անկախ ադմինիստրատորը ներկայացրեց 2019թ. Հայաստանում ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող ընկերությունները, ոլորտի տարեկան արտադրանքի և արտահանման ծավալը, ոլորտից պետական բյուջե ուղղվող եկամուտները, դրանց վերաբաշխումը, ոլորտի ներդրումը ՀՀ տնտեսության մեջ և ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող այլ տեղեկատվություն:

Զեկույցի ներկայացումից հետո կազմակերպվել է «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը որպես ոլորտի լավ կառավարման կարևոր նախապայման» թեմայով պանելային քննարկում, որին մասնակցեցին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, ԲՇԽ-ի անդամ Լիլիա Շուշանյանը, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության Ասիայի թիմի ավագ խորհրդատու Մարկ Բըրնեթը (առցանց), «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ նախագահ, ԲՇԽ անդամ Օլեգ Դուլգարյանը, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահ, ԲՇԽ-ի այլընտրանքային անդամ Վիկտորյա Բուռնազյանը, Համաշխարհային բանկի հանքարդյունաբերության կառավարման փորձագետ Նարինե Թադևոսյանը:

2. Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում

2.1. Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում

Միջոցառումներ 13-21, 24-29

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից 2020թ. 4-րդ եռամսյակում կազմված Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին և երկրորդ զեկույցներում բացահայտված, ինչպես նաև ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ քննարկումների արդյունքում արձանագրված մետաղական հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների ճանապարհային քարտեզի նախագիծը հանդիսացել է 2021թ. հուլիսի 24-26-ը Ծաղկաձորում կազմակերպված աշխատաժողովի օրակարգի հարցերից մեկը: Աշխատաժողովի մասնակիցները քննարկեցին ԲՇԽ-ի երկու խմբակցությունների՝ կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված գնահատականների հիման վրա ճանապարհային քարտեզում ներառված աշխատանքների առաջնահերթությունները: Այդ առաջնահերթությունները նախատեսվում է թարմացնել 2019թ.-ի ազգային զեկույցում արձանագրված առաջարկությունների, թերությունների և բացերի ենթատեքստում և 4-րդ եռամսյակում քննարկել դրանք ԲՇԽ-ի անդամների և աշխատանքային խմբերի հետ՝ որոշելու համար հարցերի քննարկման և իրականացման ժամանակացույցը և արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստեր տեղի չեն ունեցել: ԲՇԽ-ի անդամների միջև ողջ թղթակցությունը և համաձայնեցման ենթակա հարցերի քննարկումները տեղի են ունեցել էլեկտրոնային կապի միջոցներով:

ԲՇԽ-ի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ, մասնավորապես, զբաղեցրած պաշտոններից ազատվելու հիմքով օգոստոսի 2-ին դադարեցվել է Տիգրան Ավինյանի ԲՇԽ-ի նախագահի լիազորությունները, սեպտեմբերի 2-ին՝ կառավարության խմբակցության անդամ, ՏԿԵ նախարարի տեղակալ Լիլյա Շուշանյանի լիազորությունները: 2021թ. հուլիսի 12-ին հանքարդյունահանող

ընկերությունների խմբակցությունը տեղեկացրել է, որ այլ աշխատանքի անցնելու պատճառով դադարեցվում են նաև «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով փոխնախագահ Արմեն Ստեփանյանի ԲՇԽ-ի անդամի լիազորությունները: Հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության կազմը նաև ցավալի կորուստ է ունեցել՝ 2021թ. սեպտեմբերին մահացել է ԲՇԽ-ի այլընտրանքային անդամ, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ Անդրանիկ Աղաբալյանը: ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխություններ չեն եղել:

Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջազգային և տեղական առցանց միջոցառումների և հեռահար քննարկումների, մասնավորապես.

- 1) Հուլիսի 8-ին կայացել է ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության աշխատանքային առցանց հանդիպումը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, Opening Extractives ծրագրի համակարգողների, Օփեն Օուներշիփի (Open Ownership) ներկայացուցիչների հետ, որի ժամանակ ներկայացվել է «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության ապահովում/ Opening Extractives» ծրագիրը, քննարկվել են Հայաստանի՝ ծրագրին միանալու համար պահանջվող քայլերը և անելիքները:
- 2) Հուլիսի 14-ին Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության ապահովում/ Opening Extractives» ծրագրի ներկայացման վեբինարին:
- 3) 2021թ. սեպտեմբերի 8-ին կայացել է ԱՃԹՆ-ի միջազգային թիմի և Օփեն Օուներշիփ կազմակերպության կողմից կազմակերպված «Բաց արդյունահանում-Իրական սեփականության տվյալների ստանդարտը (BODS) կիրառողների գլոբալ ֆորում»-ին, որի ժամանակ Արդարադատությանության տվյալների ստանդարտը (BODS) կիրառողների գլոբալ ֆորում»-ին ներկայացման վեբինարին: Էլեկտրոնային կապի ներկայացրել է ԻՇ բացահայտումների համակարգի Հայաստանի փորձը:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարությունը շարունակել է համակարգել Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով սահմանված աշխատանքների իրականացումը: Իրականացվել են ԱՃԹՆ-ի տարեկան համաժողովի և դրան հաջորդած՝ Ծաղկածորում կայացած արտագնա

աշխատողովի կազմակերպչական աշխատանքները: Շահառուների ակտիվ մասնակցության ու անձնային շփումների կարևորությունը գիտակցելով՝ կայացվել է հիբրիդային համաժողով կազմակերպելու վերաբերյալ որոշում, որն ապահովեց և առկա, և առցանց մասնակցություն: Քարտուղարության կողմից իրականացվել են 2022 թվականի բյուջետային պլանավորման և համապատասխան փաստաթղթերի կազմման աշխատանքները:

2021թ. 3-րդ եռամսյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընկերների հետ համագործակցությունը արտահայտվել է հետևյալում.

- ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ շարունակվել է երկկողմանի թղթակցությունը՝ հայաստանյան ԱՃԹՆ-ի փաստաթղթերի կամ գործընթացների վերաբերյալ միջազգային թիմի կողմից տրամադրվող խորհրդատվության, պարզաբանումների և հայաստանյան քարտուղարության կողմից ըստ պահանջի տրամադրվող տեղեկատվության, հարցադրումների և այլ ձևերով:
- 2021թ. սեպտեմբեր ամսին միջազգային Open Ownership կազմակերպության կայքում ակնարկ է հրապարակվել, որտեղ Հայաստանը և Լատվիան մատնանշվել են որպես իրական սեփականության թափանցիկության ոլորտում առաջատար հանդիսացող երկրներ:
- ԱՃԹՆ խորհրդի նախագահ Հելեն Քլարկը սեպտեմբերի սկզբին նամակ է հղել ՀՀ արդարադատության նախարարին, որով Հայաստանը՝ որպես իրական սեփականության թափանցիկության ոլորտի առաջամարտիկ երկիր, հրավիրվում է միանալ ԱՃԹՆ-ի և Օփեն Օուներշիփ (Open Ownership) կազմակերպության համատեղ «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության ապահովում/ Opening Extractives» ծրագրին: Ծրագիրն իրականացվելու է իրական սեփականատերերի (շահառուների) բացահայտման գործում բարձր առաջընթաց գրանցած 13 երկրներում: Մասնակցությունն այս ծրագրին հնարավորություն կտա բոլոր շահառուներին, այդ թվում, ՀՀ կառավարությանը տեխնիկական աջակցություն ստանալ ԱՃԹՆ-ից, Open Ownership-ից, ինչպես նաև համագործակցել այլ երկրների գործընկերների հետ: Ծրագրին մասնակցությունն այդպիսով կնպաստի իրական շահառուների մասին որակյալ տվյալների բացահայտումն ու կիրառումն ապահովող իրավական, տեխնոլոգիական ու ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծմանը:

Համաշխարհային բանկի ծրագրի համակարգողների հետ շարունակվել են 2022-2024 թվականների Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին. Լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ իրականացվելիք միջոցառումների պլանավորումը:

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակվել է ԱՃԹՆ-ի 2020թ. տարեկան առաջընթացի հաշվետվությունը¹⁷: Պատրաստվել է նաև 2021թ. առաջին կիսամյակի ԱՃԹՆ-ի առաջընթացի հաշվետվությունը, որը ԲՇԽ-ի հաստատմանը կներկայացվի 4-րդ եռամսյակում:

ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարման հարցը տեղափոխվել է 2021թ. չորրորդ եռամսյակ:

2.2. ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում

Միջոցառում 30-32, 34-35

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 ֆինանսական տարին արտացոլող ազգային զեկույցը կազմող Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերությունը, հաշվի առնելով զեկույցի նախագծի վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացրած առաջարկությունները և դիտողությունները, ներկայացրել է ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխանող վերջնական զեկույցը: Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ զեկույցը հրապարակվել է¹⁸ և հանրությանն է ներկայացվել 2021թ. հուլիսի 23-ին կայացած ԱՃԹՆ-ի տարեկան համաժողովին:

Զեկույցում ներկայացվող տվյալները բաց ձևաչափով հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի [reports.eiti.am](https://www.eiti.am) անցանց հաշվետվության հարթակում:

Անկախ աուդիտորը ներկայացրել է նաև 2019 թվականի ամփոփ տվյալները՝ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության սահմանած ձևով, որը ներկայացվել է

¹⁷

<https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

¹⁸ <https://www.eiti.am/hy/annual-reports/2021>

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն: Լրացված ձևաչափով տվյալները ինտեգրվում են ԱՃԹՆ-ի անդամն երկրների բաց տվյալների հարթակում:

ԱՃԹՆ-ի երրորդ՝ 2019թ. զեկույցի ներկայացման արդյունքներով արձանագրված առաջարկությունները, թերությունները և բացերը, ինչպես վերևում նշվել է՝ կմիացվեն ԱՃԹՆ-ի առաջին և երկրորդ զեկույցների արդյունքներով ճանապարհային քարտեզի նախագծում արձանագրված հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների հետ և 4-րդ եռամսյակում կքննարկվեն ԲՇԽ-ի անդամների և աշխատանքային խմբերի հետ՝ որոշելու համար հարցերի քննարկման և իրականացման ժամանակացույցը:

Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերության կողմից պատրաստվել է նաև ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում ԱՃԹՆ-ի ստանդարտը տարածելու նպատակահարմարությունը հետազոտող Նախնական ուսումնասիրությունը: Ուսումնասիրության արդյունքում ձևավորված եզրահանգումները ներկայացվեցին և քննարկվեցին 2021թ. հուլիսի 24-26-ը կայացած աշխատաժողովի ժամանակ: Աշխատաժողովին ներկա ԲՇԽ-ի անդամները և լիազոր մարմինների ներկայացուցիչները համաձայնեցին Նախնական ուսումնասիրության արդյունքների և եզրահանգումների հետ, ըստ որոնց՝ ԱՃԹՆ-ի ընդլայնումը և կիրառումը նշված ոլորտների նկատմամբ նպատակահարմար չի համարվել, առաջին հերթին, տնտեսության մեջ այդ ոլորտների ներկայիս փոքր մասնաբաժնի և ոլորտներից պետությանը ուղղվող ոչ էական եկամտային հոսքերի պատճառով: 2021թ. չորրորդ եռամսյակում՝ ԲՇԽ-ի կազմի համալրումից հետո նախատեսվում է Նախնական ուսումնասիրության եզրահանգումները քննարկել ԲՇԽ-ի լիազումար նիստում և համապատասխան որոշում կայացնել դրանց վերաբերյալ:

ԱՃԹՆ-ի չորրորդ՝ 2020թ. հաշվետու տարվա ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակումը, հաստատումը և ընտրությունը տեղափոխվել են 2021թ. չորրորդ և 2022թ. առաջին եռամսյակ, քանի որ որոշակի հանգամանքներ, այն է՝ զեկույցի մշակման ֆինանսավորման աղբյուր հանդիսացող ԱՃԹՆ-ի աջակցման ՀԲ-ի երկրորդ դրամաշնորհի՝ 2021թ. հունիսի 28-ից ուժի մեջ մտելու փաստը, ինչպես նաև ԲՇԽ-ի կազմի համալրման անհրաժեշտությունը որոշակիորեն երկարաձգել են 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի աշխատանքների կատարումը:

2.3. Իրական սեփականատերերի բացահայտման առցանց հանրային ռեգիստրի գործարկում, իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրային վերահսկողության հնարավորությունների աճ

Միջոցառումներ 41-47

2021 թվականից շահագործվող Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը ներկայացնելու հանրային իրազեկման միջոցառումը համատեղվեց 2021թ. հուլիսի 23-ին կայացած Հայաստանի ԱՃԹՆ-ի համաժողովի հետ: Համաժողովի առաջին մասում համակարգը ստեղծած VXSofT ընկերության ներկայացուցիչներ Վահագն Մխիթարյանը և Լուսինե Իսակովան ներկայացրեցին իրական սեփականատերերի (շահառուների) հայտարարագրման էլեկտրոնային համակարգը, որի միջոցով արդեն 2021թ. մարտից ընկերությունները ներկայացնում են իրական սեփականատերերի վերաբերյալ էլեկտրոնային հայտարարագրեր: Համակարգը մշակողները պատմեցին նաև էլեկտրոնային համակարգի՝ տվյալների ճշտությունը ինքնաշխատ ստուգելու առկա և սպասվող հնարավորությունների մասին: Համակարգի ներկայացմանը հետևեց «Իրական սեփականատերերի բացահայտումը, որպես հակակոռուպցիոն գործիք. հնարավորություններն ու մարտահրավերները» թեմայով պանելային քննարկումը, որին մասնակցեցին Արդարադատության նախարարության Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Անի Վարդերեսյանը, OpenOwnership իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստրի ներկայացուցիչ Փիթեր Լոուն (առցանց), Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյոյանը, Սիվիլինթի հետաքննող լրագրող Մկրտիչ Կարապետյանը:

2021թ. հունիսի 3-ին ընդունված օրենքների կիրարկումն ապահովելու համար 2021թ. օգոստոսի 30-ին ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարի «Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման, ներկայացման և իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը սահմանելու, ինչպես նաև ՀՀ արդարադատության

նախարարի 2020 թվականի փետրվարի 5-ի N 36-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 416-Ն հրամանը: 2021թ. սեպտեմբերի 1-ից իրական շահառուների հայտարարագրերը պետք է ներկայացվեն այս հրամանով սահմանված հայտարարագրի ձևով: Նոր կարգը որոշակի փոփոխություններ է սահմանում նաև ընդերքօգտագործման ոլորտի հայտարարատու ընկերությունների համար: Դրա մասին իրազեկելու և խորհրդատվություն տրամադրելու նպատակով՝ ԱՃԹՆ ազգային քարտուղարությունը պատրաստել է Իրական շահառուների բացահայտման կարգավորումների օրենսդրական փոփոխությունների ուղեցույց¹⁹, որը տեղադրվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում:

Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնող հանքարդյունահանող ընկերություններին ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից շարունակական խորհրդատվություն է տրամադրվել առցանց հայտարարագրերի ներկայացնելու ընթացքում առաջացող հարցերի և խնդիրների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ստեղծման և անխափան գործարկման աշխատանքները համակարգող աշխատանքային խումբը համակարգը ստեղծող և սպասարկող ընկերությանն է ներկայացրել ԻՇ հայտարարագրման նոր կարգին համապատասխանեցնելու համար էլեկտրոնային համակարգում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու առաջադրանք: Ընկերությունը արդեն սկսել է համակարգի համապատասխանեցման աշխատանքերը՝ սեպտեմբերից նոր կարգով առցանց հայտարարագրերի ընդունումը ապահովելու համար: Սեպտեմբերից էլեկտրոնային համակարգի միջոցով ԻՇ հայտարարագրեր պետք է ներկայացնեն նաև այլ ոլորտների իրավաբանական անձինք՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

2021թ. հունիսի 3-ին ընդունված ձեռնարկությունների իրական շահառուների (ԻՇ) թափանցիկությունը էապես մեծացնող կարևոր իրավական ակտերը²⁰ և դրանցով իրականացված փոփոխությունները որոշակիորեն լուծեցին նաև մետաղական հանքարդյունահանող ընկերությունների ԻՇ-ի հայտարարագրման գործընթացի վերաբերյալ մինչ այդ արձանագրված որոշակի բացերը և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու խնդիրները: ԱՃԹՆ

¹⁹ <https://www.eiti.am/hy/Իրական-սեփականատերերի-բացահայտում>

²⁰

<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/06/23/%D5%88%D5%BE-%D5%A7-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B7%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B6/108/>

Ստանդարտի իրական շահառուների 2.5-րդ պահանջի վավերացման գնահատականի փաստաթղթով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված առաջարկների անդրադարձը և քննարկումները տեղափոխվել են 2021թ. չորրորդ եռամսյակ՝ ԲՇԽ-ի համալրված կազմով քննարկելու համար:

2.4. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման վերաբերյալ ԲՇԽ-ի որոշման դեպքում՝ ՀՀ իրավական դաշտի համապատասխանեցում

Միջոցառումներ 48-52

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում ԱՃԹՆ-ի ստանդարտը տարածելու նպատակահարմարությունը հետազոտող Գրանթ Թորնթոն խորհրդատվական ընկերության կողմից պատրաստված Նախնական ուսումնասիրությունը և դրա եզրահանգումները ներկայացվեցին և քննարկվեցին 2021թ. հուլիսի 24-26-ը կայացած աշխատաժողովի ժամանակ: Աշխատաժողովին ներկա ԲՇԽ-ի անդամները և լիազոր մարմինների ներկայացուցիչները համաձայնվեցին Նախնական ուսումնասիրության արդյունքների և եզրահանգումների հետ, ըստ որոնց՝ ԱՃԹՆ-ի ընդլայնումը և կիրառումը նշված ոլորտների նկատմամբ նպատակահարմար չի համարվել: 2021թ. չորրորդ եռամսյակում՝ ԲՇԽ-ի կազմի համալրումից հետո նախատեսվում է Նախնական ուսումնասիրության եզրահանգումները քննարկել ԲՇԽ-ի լիազումար նիստում և համապատասխան որոշում կայացնել դրանց վերաբերյալ:

3. ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում

Միջոցառումներ 53-55

ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակումը և ուսումնասիրություն իրականացնող կազմակերպության ընտրությունը տեղափոխվել են 2021թ. չորրորդ և 2022թ. առաջին եռամսյակ, որոշակի հանգամանքների, մասնավորապես, աշխատանքների ֆինանսավորման աղբյուր հանդիսացող՝ ԱՃԹՆ-ին աջակցության ՀԲ-ի երկրորդ դրամաշնորհի փաստացի մեկնարկի, ինչպես նաև ԲՇԽ-ի կազմի համալրման անհրաժեշտությամբ: Որոշակիորեն երկարաձգել են նաև 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի այս բաժնի աշխատանքների կատարումը:

2021թ. երրորդ եռամսյակում ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացման՝ 2021-22թթ աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներ տեղի չեն ունեցել: Ելնելով COVID-19 համավարակով պայմանավորված իրադրությունից՝ կարողությունների հզորացման առկա միջոցառումները պլանավորվում է կազմակերպել 2022 թվականին:

Հաշվետու ժամանակահատվածում շահառուների կարողությունների հզորացման և իրազեկման միջոցառումներ են իրականացվել ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից, որոնք ներկայացված են 5-րդ բաժնում:

4. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում

Միջոցառումներ 68-71

Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն առնչվող մի շարք հարցեր քննարկվել են հուլիսի 24-26-ը Ծաղկածորում կայացած

աշխատաժողովին, որի ժամանակ մասնակիցները քննարկել են ոլորտի իրավական և ընթացակարգային բացերը ու դրանց հնարավոր լուծումները:

2021-22թթ. աշխատանքային ծրագրի այս բաժնում նախատեսված այլ աշխատանքներ երրորդ եռամսյակում չեն կատարվել:

Հաշվետու ժամանակահատվածում ընդունված՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտերը

- Օգոստոսի 11-ին ընդունվել է ՀՀ ՏԿԵ նախարարի «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» N 06-Ն հրամանը²¹:

- Օգոստոսի 12-ին ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների փաթեթը, որով առաջարկվում է ընդերքօգտագործողների կողմից վճարվող ռոյալթիի 2 տոկոսը փոխանցել ազդակիր համայնքներին (ՀՀ կառավարության 12.08.2021թ. նիստի հարց 15²²):

- Օգոստոսի 18-ին ՀՀ կառավարությունը ընդունել է «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» N 1352-Ն որոշումը²³:

- 2021թ. օգոստոսի 30-ին ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարի «Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման, ներկայացման և իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը սահմանելու, ինչպես նաև ՀՀ արդարադատության

²¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155218&fbclid=IwAR3ef1cncr2QliW-UjosbnNUrgOgmSPQrs9ro9nLURtYyyaoWnDg5o5y2MNs>

²² <https://www.e-gov.am/sessions/archive/2021/08/12/>

²³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=155279>

նախարարի 2020 թվականի փետրվարի 5-ի N 36-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 416-Ն հրամանը²⁴:

5. Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից կապարված աշխատանքները²⁵

Միջոցառումներ 11-12

2021 թվականի 3-րդ եռամյակում ԱՄՆ ՄԶԳ «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ծրագրի շրջանակում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ գործընկերների հետ աշխատանքի արդյունքում իրականացվել են հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի գործընթացի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

- Ծրագրի շրջանակում «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն 2021 թվականի 3-րդ եռամյակում իրականացրել է 1 ուսումնասիրություն²⁶, թողարկել է 2 հոդված²⁷, 3 մուլտիմեդիա հոդված²⁸ և 1 ինֆոգրաֆիկ²⁹, որոնք նպատակ ունեն խթանելու հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը և իրական սեփականատերերի բացահայտումը:
- Հաշվետու ժամանակաշրջանում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն ենթադրամաշնորհային պայմանագիր է կնքել «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի հետ՝ իրականացնելու Ծրագրով նախատեսված ԲՀԿ-ների իրազեկման գործողություններ հանքարդյունաբերության ոլորտում, ինչպես նաև համայնքի

²⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155465>

²⁵ Այս ենթաբաժնի բովանդակությունը լրացվել է ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից և չի հանդիսանում ԲՇԽ-ի ընդհանուր տեսակետը:

²⁶ <https://hetq.am/hy/article/132922>

²⁷ <https://hetq.am/hy/article/134916>; <https://hetq.am/hy/article/134373>

²⁸ <https://hetq.am/hy/article/134983>; <https://hetq.am/hy/article/135779>; <https://hetq.am/hy/article/134983>

²⁹ <https://hetq.am/hy/article/132901>

ակտիվ խմբերի և ՔՀԿ-ների մասնակցության խթանում: Սույն պայմանագրի շրջանակներում «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից սեպտեմբերի 10-ից մինչ նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կիրականացվի փորձի փոխանակման այցելություններ և դիտարկումներ Լոռի-Գեղարքունիքից դեպի Արարատ-Սյունիք և Սյունիք-Արարատից դեպի Գեղարքունիք-Լոռի մարզերի հանքարդյունաբերական պոչամբարներ, թափոնակույտեր, աղտոտման և աղտոտված այլ օջախներ և տարածքներ: Այցելություններին, որոնք կլուսաբանվեն ուղիղ եթերով, կմասնակցեն ազդակիր համայնքի բնակիչները, ակտիվ խմբերը, շրջակա միջավայրի փորձագետները և ՁԼՄ ներկայացուցիչները:

ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի 2021 թվականի 3-րդ կատարողականը

ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջը	Հ/Հ	Միջոցառում	Արդյունքը	Պատասխանատուն	Ժամկետները	Նշումներ
Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում						
7.2	1	ԱՃԹՆ կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ	Կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրություններ, հոլովակներ, իրավական ակտեր, նորություններ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ	2021 2022	
7.2	2	ԱՃԹՆ-ի կայքի ընթացիկ սպասարկում, ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքներ	Կայքի և հաշվետվությունների առցանց հարթակի անխափան աշխատանք	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, սպասարկող կազմակերպություն	2021 2022	

7.1	3	Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
7.1	4	ԱՃԹՆ-ի գործընթացների և արձանագրված արդյունքների վերաբերյալ հանրային հրազեկում և լուսաբանում (Media, TV, YouTube, Twitter, facebook և այլն)	Տարբեր սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
7.1	5	Հայաստանի ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայում	Վերանայված ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարություն և գործողությունների ծրագիր, վերաբրենդավորում	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ	Q3, Q4, 2021 Q1, 2022	Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման աշխատանքները չեն սկսվել:

7.2	6	ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման խորհրդատվություն	ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների հարթակում հրապարակված հաշվետվություններ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
7.1	7	Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահառուների հետ աշխատանքային հանդիպումների իրականացում	Հանդիպումներ, այդ թվում՝ մարզային և համայնքային շահառուների. կրթական հաստատությունների և լայն հասարակայնության խմբերի հետ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
7.1	8	ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 ֆինանսական տարին ներկայացնող ազգային զեկույցի պաշտոնական ներկայացում/ կոնֆերանս	ԱՃԹՆ-ի կոնֆերանս (առկա կամ առցանց)	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	

7.2	11	<p>«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում</p>	<ul style="list-style-type: none"> • Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի ձեռնարկ հանրային վերահսկողություն իրականացնելու համար, • Հանքարդյունաբերության վերաբերյալ տեղեկատվական առցանց հարթակ, • Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվության վերաբերյալ ուսումնասիրություն • Հետաքննական նյութեր /տեսանյութեր, հոդվածներ/ 	<p>Թրանսփարենսի հնթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, Էկոլուր տեղեկատվական ՀԿ, Հետաքննող լրագրողներ ՀԿ</p>	Q2, Q3, 2021	
-----	----	--	--	---	--------------	--

	12	«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային հրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում	Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ դասընթացներ ԲՀԿ-ների համար, քննարկումներ շահագրգիռ խմբերի հետ, հանդիպումներ ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ	Թրանսփարենսի հնթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, Էկոլուր տեղեկատվական ՀԿ	Q2, Q3, 2021	
Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում						
Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում						
7.3 7.4	13	ԱՃԹՆ 1-ին և 2-րդ զեկույցներում արձանագրված՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի հրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների	Ճանապարհային քարտեզի նախագիծ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, 2021	

		ճանապարհային քարտեզ մշակում			
	14	ԲՇԽ-ի կողմից ճանապարհային քարտեզի հաստատում	Ճանապարհային քարտեզ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021 Նախատեսվում է 2021 թվականի 4-րդ եռամսյակում
	15	ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում՝ ճանապարհային քարտեզում ամրագրված բացերին անդրադառնալու համար	աշխատանքային խմբեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, պետական շահագրգիռ մարմիններ	Q2, 2021
	16	Ճանապարհային քարտեզում արձանագրված բացերի վերացման աշխատանքներ՝ ըստ աշխատանքային խմբերի	աշխ. խմբերի հանդիպումներ, քննարկումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր	ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պատկան մարմիններ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, Q3, Q4 - 2021 2022
1.4	17	ԲՇԽ-ի նիստերի անցկացում	ԲՇԽ-ի նիստեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, Q3, Q4 - 2021 Q1, Q2, Q3, Q4 - 2022 Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստեր չեն անցկացվել: ԲՇԽ-ի որոշումները կայացվել են ԲՇԽ-ի

						աշխատակարգով սահմանված կարգով՝ էլեկտրոնային եղանակով:
1.4	18	ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում	հանդիպումներ	ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
1.4	19	ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում	ՀՀ վարչապետի որոշում, ԲՇԽ	ԲՇԽ-ի խմբակցություններ, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն	2021 Q4, 2022	
	21	ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն	ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
1.5	22	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թթ. աշխատանքային ծրագրի	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թթ. աշխատանքային ծրագրի կատարողական	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	

		կատարողականի կազմում և հաստատում				
1.5	23	ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի մշակում և հաստատում	ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագիր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, 2021	
	24	Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
	25	Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք	Հայաստանի ԱՃԹՆ-ի իրականացման փաստաթղթեր, հաշվետվություններ, աշխատանքային ծրագրեր, հանդիպումներ, աջակցություն ԲՇԽ-ին, տեղական և միջազգային համագործակցություն, խորհրդատվության տրամադրում, պետական բյուջեի փաստաթղթերի և հաշվետվությունների կազմում, գնումների գործընթացի ապահովում	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	

1.4 7.4	26	ՀՀ ԱՃԹՆ-ի 2020թ. տարեկան հաշվետվության կազմում և հաստատում	ՀՀ ԱՃԹՆ-ի 2020 տարեկան հաշվետվություն	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2 - 2021	
1.4 7.4	27	ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում	Եռամսակային հաշվետվություններ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, Q3, Q4, 2021 Q1, Q2, Q3, Q4, 2022	
1.4	28	Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ	Նամակագրություն, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր, միջազգային աշխատանքային խմբերի առցանց հանդիպումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	2021 2022	
	29	ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում		ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q3, 2021 Q3, 2022	Հաշվետու ժամանակահատվածում անդամավճարը չի վճարվել:
ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում						
4.8	30	Հայաստանի ԱՃԹՆ-ի երրորդ՝ 2019թ. հաշվետու տարվա զեկույցի մշակում	ԱՃԹՆ-ի զեկույցի նախագիծ, ԱՃԹՆ-ի զեկույց, ամփոփ տվյալների ձևաչափ	Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q4, 2020 - Q2, Q3, 2021	

<p>7.3 7.4</p>	<p>31</p> <p>ԱՃԹՆ-ի երրորդ՝ 2019թ.-ի զեկույցի ներկայացման արդյունքներով արձանագրված (այդ թվում, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից) առաջարկությունների, թերությունների և բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկություններն իրականացնելու եղանակները որոշելու և անհամապատասխանությունները վերացնելու համար</p>	<p>Հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր, ԲՇԽ-ի նիստ</p>	<p>ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, պատկան մարմիններ</p>	<p>Q3, Q4, 2021</p>	
--------------------	---	--	---	---------------------	--

<p>7.2 7.3</p>	<p>32</p>	<p>Նախնական ուսումնասիրության արդյունքներով ԲՇԽ-ի կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում ԱՃԹՆ-ի ստանդարտը տարածելու դրական որոշման դեպքում, ինչպես նաև համակարգված բացահայտումները իրականացնելու համար պահանջվող օրենսդրական փոփոխությունների իրականացում</p>	<p>Հանդիպումներ, քննարկումներ, իրավական ակտերի նախագծեր</p>	<p>ԲՇԽ, պատկան պետական մարմիններ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն</p>	<p>Q3, Q4, 2021 Q1, Q2, Q3, Q4, 2022</p>	
<p>7.2 7.3</p>	<p>34</p>	<p>ԱՃԹՆ-ի չորրորդ՝ 2020թ. հաշվետու տարվա ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում (ԱՃԹՆ-ի միջազգային</p>	<p>Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագիծ</p>	<p>ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն</p>	<p>Q3, 2021</p>	

		քարտուղարության անցումային առաջարկությունների ներառմամբ) և հաստատում				
	35	Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում)	ԱՃԹՆ-ի 2020թ. տարվա ազգային զեկույցի Անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարություն, մրցույթ, անկախ ադմինիստրատորի հետ կնքված պայմանագիր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q3, Q4, 2021	Անկախ ասմինիստրատորի ընտրության մրցույթի աշխատանքները ընթացիկ ժամանակահատվածում չեն սկսվել:
Իրական սեփականատերերի բացահայտման առցանց հանրային ռեգիստրի գործարկում, իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, հանրային վերահսկողության հնարավորությունների աճ						
7.1	41	Իրական սեփականատերերի առցանց ռեգիստրի գործարկման հանրային իրազեկման միջոցառում	Մամուլի ասուլիս	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	

	<p>42</p> <p>Առցանց ռեգիստրի հարթակում իրական սեփականատերերի հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում/խորհրդատվություն</p>	<p>Ուսուցում/խորհրդատվություն , ԻՍ առցանց ռեգիստրում հրապարակված հայտարարագրեր</p>	<p>ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ռեգիստրը սպասարկող կազմակերպություն</p>	<p>2021 2022</p>	
<p>2.5</p>	<p>43</p> <p>Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի բարելավման նպատակով իրավական ակտերի մշակում</p>	<p>Իրավական ակտերի նախագծեր</p>	<p>Իրական սեփականատերերի բացահայտման ախտանքային խումբ, Արդարադատության նախարարություն, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն</p>	<p>2021 2022</p>	
	<p>44</p> <p>Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի բարելավման նպատակով մշակված իրավական ակտերի հաստատում ԲՇԽ-ի</p>	<p>Իրավական ակտերի նախագծեր</p>	<p>ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, Արդարադատության նախարարություն</p>	<p>2021 2022</p>	

	կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն				
45	ԻՍ բացահայտման հանրային առցանց ռեգիստրում հրապարակվող ԻՍ տվյալների մոնիտորինգ, քանակական վերլուծություն, որակական գնահատական՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաև ԻՍ հայտարարագրերի ներկայացման գործընթացի թույլ և ուժեղ կողմերի վերլուծություն	Քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, իրավական ակտերի նախագծեր	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ՀԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, Իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խումբ	2021 2022	

46	ԱՃԹՆ Ստանդարտի Իրական սեփականատերերի 2.5 պահանջի վավերացման գնահատականի փաստաթղթով ԱՃԹՆ միջազգային քարտուղարության կողմից ներկայացված առաջարկների անդրադարձը/ հասցեագրում	Քննարկումներ, հանդիպումներ, կարծիքներ, վերլուծություն, լրացուցիչ տեղեկատվության տրամադրում, իրավական ակտերի նախագծեր՝ ըստ անհրաժեշտության	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ԻՍ բացահայտման աշխատանքային խումբ	Q2, Q3, Q4 - 2021	
47	Իրական սեփականատերերի բացահայտման առցանց հանրային ռեգիստրի կատարելագործում՝ ըստ անհրաժեշտության	Կատարելագործված առցանց ռեգիստր, ԻՍ հայտարարագրերի առցանց ներկայացման ծրագրային խնդիրների վերացում	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմին, ընտրված կազմակերպություն	2021 2022	
Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման վերաբերյալ ԲՇԽ-ի որոշման դեպքում՝ ՀՀ իրավական դաշտի համապատասխանեցում					
48	Հայաստանում ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման վերաբերյալ Անկախ Ադմինիստրատորի կազմած Նախնական ուսումնասիրության կազմում	Նախնական ուսումնասիրություն, ԲՇԽ որոշում	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ- ԱՃԹՆ քարտուղարություն, Անկախ ադմինիստրատոր	Q2, Q3 , 2021	

7.3	49	Հայաստանում ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման վերաբերյալ Անկախ Ադմինիստրատորի կազմած Նախնական ուսումնասիրության քննարկում, շրջանակի ընդլայնման նպատակահարմարության վերաբերյալ որոշման կայացում	հանդիպումներ, քննարկումներ, կարծիքներ, ԲՇԽ որոշումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, Անկախ ադմինիստրատոր	Q2, Q3, 2021	
	50	ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման վերաբերյալ ԲՇԽ-ի դրական որոշման դեպքում՝ համապատասխան քննարկումներ շահառուների (ընկերությունների, պետական մարմինների ներկայացուցիչներ, այլք) հետ	հանդիպումներ, քննարկումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, պատկան մարմիններ, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ	Q3, Q4, 2021	Կախված 49-րդ միջոցառման արդյունքից՝ սույն միջոցառման իրականացման անհրաժեշտություն չի առաջացել:
ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների ապահովում, ԱՃԹՆ ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում						

4.8/4.9	53	ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկական հնարավորությունների ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում (ներառյալ՝ ինքնաշխատ բաց տվյալներ գեներացնող պորտալի/ԱՃԹՆ պաշտոնական կայքի/ և պատկան պետական մարմինների կայքէջերում բաց տվյալների սկզբունքով կանոնավոր հրապարակումների իրականացնելու հնարավորությունները)	տեխնիկական առաջադրանք	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q1, Q2, 2021	Միջոցառման աշխատանքները ընթացել են նաև 3-րդ եռամսյակում
	54	Ուսումնասիրությունն իրականացնող կազմակերպության ընտրություն	պայմանագիր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021	Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին»

	55	Ուսումնասիրության իրականացում և ներկայացում՝ ԲՇԽ-ի հաստատման համար	Ուսումնասիրություն	կատարող կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ՀԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ	Q2, Q3, 2021	դրամաշնորհային ծրագրի գործողության ժամկետում միջոցառումը հնարավոր չի եղել իրականացնել: Այն կիրականացվի մինչև 2022թ. 2-րդ եռամսյակը ընկած ժամանակահատվածում:
Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում						
7.4	68	Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում	Ճանապարհային քարտեզի միջոցառումներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ՀԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	2021 2022	

69	Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ	հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ՀԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	2021 2022	
70	Հանքարդյունաբերության ռազմավարության մշակմանը մասնակցություն	ԲՇԽ-ի աշխատանքային խմբի հանդիպումներ, առաջարկություններ, կարծիքներ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ՀԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	Q2, Q3, Q4 , 2021 Q1, Q2, 2022	
71	Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման ճանապարհային քարտեզի լրամշակում	լրամշակված ճանապարհային քարտեզ	աշխատանքային խումբ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ՀԱՃԹՆ քարտուղարություն	Q2, 2021, Q2, 2022	

Միջոցառումների կարգավիճակը
Իրականացված
Ընթացիկ
Չսկսված
Չիրականացված